

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի հայրենակիցներ, ավարտվեց ևս մեկ տարի՝ լի իրադարձություններով, և տնտեսական, և քաղաքական կյանքում:

Առաջին ու կարևոր հանգամանքը բոլորիս համար, անշուշտ, մեր երկրի խաղաղությունն է, որի պայմաններում մենք աստիճանաբար ոտքի ենք կանգնեցնում մեր տնտեսությունը:

Ու այդ պատճառով, առաջինը, որ ցանկանում եմ մաղթել ձեզ, սիրելի հայրենակիցներ, հարատև խաղաղությունն է մեր երկրում ու բոլորիդ հարկի ներքո:

Նոր տարին թող ձեզնից յուրաքանչյուրի համար դառնա նաև նոր հաջողությունների ու ձեռքբերումների սկիզբ:

Համոզված եմ մեզ կհաջողվի լուծել մեր պետության առջև ծառայած խնդիրները և ամրապնդել մեր պետականությունը: Այդ պարագայում է միայն հնարավոր դիմագրավել արտաքին դժվարություններն ու վտազները:

Բոլորիդ մաղթում եմ անկոտրում հավատ մեր պետության ապագայի հանդեպ, բարություն միմյանց նկատմամբ, համախմբվածություն մեր ազգային ընդհանուր նպատակների իրագործման ճանապարհին, սեր և ջերմություն ձեր օջախներին և մեր երկրին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: